

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պետական քոլեջ

*«Գրադարանային գործ» բաժին*

# Դիպլոմային աշխատանք

*Թեմա՝ «Ուսումնական օրացույցը՝ որպես արդի  
գրադարանավարի աշխատանքային գործիք»*

*Ուսանող՝ Անահիտ Մոսինյան*

*Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան*

Երևան 2019

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

#### ԳԼՈՒԽ 1

Գրադարանավարի մասնագետական զարգացումն ու փոփոխությունները

1.1. Պատմական ակնարկ. հին ժամանակներից մինչև մեր օրերը

1.2. Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործառույթները

#### ԳԼՈՒԽ 2

Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործիքները

2.1. Անհատական աշխատանքային պլան

2.2. Գրադարանավարի օրացույց

2.3. Գրադարանավարի մեղիատիրությունները. թվային գրադարան, գրադարանավարի բլոգ

Եզրակացություն

Գրականության ցանկ

Հավելված 1: Գրադարանավարի անհատական աշխատանքային պլանի նմուշ

Հավելված 2: Գրադարանավարի օրացույցի նմուշ

Հավելված 3\* (այստեղ հավարված են առավել օգտագործվող հայալեզու էլեկտրոնային գրադարաններ)

Էլեկտրոնային գրադարանների ցուցակ

Հրատարակչություններ

Հավելված 4\* Իմ բլոգը՝ գրադարանավար՝ Անահիտ Մուսինյան

Հավելված 5\* Օրացույցով նախատեսված նախագծեր

[Գրքի նվիրատվության օր, գրքի շնորհանդես](#)

[Մայրենի լեզվի միջազգային օր](#)

[Երեխաների պաշտպանության միջազգային օր: Բացօթյա ընթերցանություն](#)

[Գիտելիքի, գրքի և դպրության օր](#)

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Գրադարանը ստեղծվել է մարդու կողմից և նախատեսված է մարդու համար: Գրադարանների միջոցով է իրականացվում մշակութային արժեքների պահպանման գործընթացը: Պատմամշակութային զարգացման ընթացքում գրադարանը չի կորցրել իր ստեղծագործական դերը, ավելին՝ այն շարունակում է զարգանալ հասարակության նոր սոցիալ-մշակութային մոտեցումներին և պահանջներին համապատասխան:

Այսօր՝ տեղեկատվական մեր դարում, գրադարանների կողմից կազմակերպվող տեղեկատվական, մշակութային, կրթական և գիտական գործունեության հիմնական նպատակը պետք է լինի գրադարանային հավաքածուների, մասնագետների ու նյութատեխնիկական բազայի միջոցով նպաստել մարդու՝ տեղեկատվություն ստանալու և ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացմանը: Տեղեկատվական միջոցների հեղափոխության մեր ժամանակներում գրադարաններն այլևս սոսկ գրքերի դարաններ չեն, այլ տեղեկատվական ռեսուրս կենտրոններ:

Այդ տեսանկյունից մասնավորապես դպրոցական գրադարանները պետք է կարողանան դառնալ ավելի ընդարձակ՝ գլոբալ տեղեկատվական և գրադարանային ցանցերի մի օղակը, ոչ միայն դուռ դեպի բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվության աշխարհ, այլ նաև ուղեցույց այդ աշխարհում չմոլորվելու համար: Եվ սա հնարավոր է ապահովել՝ գրադարանային համապատասխան բարենպաստ միջավայր ստեղծելով, կատարելագործելով: Իսկ գրադարանի համար բարենպաստ միջավայր ստեղծում է գրադարանավարը: Եվ սա հենց գրադարանավարի գործառույթն է: Բայց այդպիսի պատասխանատվություն ստանձնելու համար նախ և առաջ գրադարանավարը պետք է

ունենա պատշաճ որակավորում, տիրապետի այդ հմտություններին: Իր գործառույթները լավագույնս կատարելու համար արդի գրադարանավարը պետք է ակտիվորեն մասնակցի գրադարանային գործի վերածննդի գործընթացին, բարձրացնի իր աշխատանքի որակի նկատմամբ պահանջների և մասնագիտական որակների մակարդակը: Իր համար որպես մասնագետի՝ առաջնային դարձնի ոլորտի փոփոխվող պայմաններին արագ հարմարվելու ունակությունը, ընթերցողների նոր պահանջներն ու կարիքները մշտապես ուսումնասիրելու պատրաստակամությունը: Արդյունքում՝ գրադարանավարն այսօր դառնում է այն մասնագետը, ով շատ հարցերում անմիջականորեն ազդում է մշակույթի, կրթության և տեղեկատվական համակարգերի զարգացման վրա: Մեր օրերում գրադարանավարը, բացի իր գործառույթներից, կարող է կատարել նաև այլ գործառույթներ: Օրինակ՝ ուսուցչի, մանկավարժի, հոգեբանի:

Դիպլոմային աշխատանքի թեման ընտրվել է՝ հենց այս նոր մոտեցումներից ելնելով, այն է՝ գրադարանավարի աշխատանքի կազմակերպման արդի մոտեցումները, որոնք համահունչ կլինեն նոր ժամանակների պահանջներին: Այն է՝ օրացույց, արդի գրադարանավարի աշխատանքային գործիք, գրադարանավարի՝ ժամանակին համահունչ աշխատանքային գործառույթները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, որտեղ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, և երկու գլուխներից. առաջին գլուխը վերնագրված է հետևյալ կերպ՝ **«Գրադարանավարի մասնագետական զարգացումն ու փոփոխությունները»**, որը ունի ենթաբաժիններ. 1.1. Պատմական ակնարկ. հին ժամանակներից մինչև մեր օրերը, 1.2. Արդի գրադարանավարի աշխատանքային գործառույթները, երկրորդ գլուխը՝ **«Ժամանակից գրադարանավարի աշխատանքային գործիքները»**, որի ենթաբաժիններն են՝ 2.1. Անհատական աշխատանքային պլան, 2.2. Գրադարանավարի օրացույց,

Աշխատանքում ներկայացվում է գրադարանավարի դերը պատմական վաղնջական ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Ներկայացվում է գրադարանավարի գործառույթները, աշխատանքային պլանը, օրացույցը՝ որպես աշխատանքային նորագույն գործիքներ: Աշխատանքն ունի նաև եզրակացություն:

Ներկայացված է նաև գրականության էլեկտրոնային և տպագիր աղբյուրները, որից ազդեցություն է կրել աշխատանքը:

## ԳԼՈՒԽ 1

# Գրադարանավարի մասնագետական զարգացումն ու փոփոխությունները

### *1.3. Պատմական ակնարկ. հին ժամանակներից մինչև մեր օրերը*

Գրադարանավարի մասնագիտությունը հնագույններից է աշխարհում, այն առաջացել է շումերական մշակույթի հետ, երբ առաջին անգամ Միջագետքում ստեղծվել են կավե սալիկներով գրքերը և դրանցից օգտվելու նպատակով կազմված գրացուցակները: Առաջին գրադարանավարները մ.թ.ա. մոտավորապես 2500թ կավե սալիկներ ստեղծողներն էին: Պապիրուսի հայտնագործումից հետո գրիչ-գրադարանավարների թիվը բազմապատկվեց (Ռամզես II փարավոնի կողմից նրանց աշխատանքի շնորհիվ հավաքվել էր 20 000 պապիրուս): «Գրադարանավար» բառն առաջին անգամ գործածվել է Հունաստանում, որի հիմքում «գրքերի հավաքածու» հունարեն արտահայտությունն էր: Արևմտյան Եվրոպայում գրադարանավարի կոչումը պատվավոր էր, որով պարգևատրում էին լավ աշխատանքի համար:

Շատ հայտնի և նշանավոր մարդիկ պետության ղեկավարներ, գիտնականներ, գրողներ, եկեղեցու սպասավորներ, երաժիշտներ, աշխատել են աշխարհի ամենահայտնի ու անհայտ գրադարաններում տարբեր դերակատարում ունենալով գրադարանագիտության զարգացման գործում: Բոլորին միավորել է մի հանգամանք. գրադարանն ընկալելով որպես իմացության առանցք՝ նրանք ծառայել են գրքին և մարդկության առաջընթացին:

Գրադարանավարի դերի բազմակողմանի ուսումնասիրությունը՝ որպես ուրույն սոցիալ-պրոֆեսիոնալ մասնագիտության, անհրաժեշտ է պարզապես դիտարկել նրանց աշխատանքի՝ գրադարանային գործի պայմաններում: Անչափ կարևոր է դիտարկել ու

գնահատել բազմատեսակ կապերի ամբողջական համակարգը և բոլոր այն դրսևորումները, որոնք բնութագրում են գրադարանային ոլորտի կենսագործունեությունը և գրադարանավարների դերը այդ համատեքստում: Առհասարակ, գրադարանավարի մասնագիտության դերն ու նշանակությունը, բնույթն ու որակական առանձնահատկությունները սահմանվում են գրադարանների և գրադարանային մասնագետների նկատմամբ հասարակության և հանրության կողմից ներկայացվող պահանջներով:

Հասարակությունը, կախված իր իսկ զարգացվածության մակարդակից, գրադարանավարներին վերագրում է այս կամ այն գործառույթները և համալրում դրանք որոշակի բովանդակությամբ: Նույն հասարակությունը նաև խթանում և վերահսկում է վերջիններիս իրագործումը: Որպեսզի պարզ լինի, թե ինչպես է օրինաչափ ձևով փոփոխվել և ընդլայնվել գրադարանավարի գործառույթները, չի կարելի շրջանցել գրադարանավարի նկատմամբ սոցիալական անհրաժեշտության, պահանջի խնդիրը: Խոսքը վերաբերում է հանրային պահանջների ամբողջականությանը, որոնք անհրաժեշտ են և բավարար՝ հասարակության կողմից գրադարանավարին վերագրված գործառույթներն ամբողջությամբ իրականացնելու համար:

Գրադարանավարի պրոֆեսիոնալ գիտակցությունը (բանականությունը), որն իրենից ներկայացնում է պատկերացումների, հասկացությունների, գաղափարների, հայացքների մի դինամիկ համակարգ, կանխորոշվում է գրադարանային գործունեության պայմաններով, ինչպես նաև հենց գրադարանավարի գործառույթների իրականացման գործընթացով՝ միտված սոցիալական տեղեկատվության պահանջը բավարարելուն: Հասարակության պահանջների նկատմամբ գրադարանային բանականության ադեկվատությունից է կախված իրական գրադարանային գործունեությունը:

Ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվել գրադարանների առջև դրված խնդիրները, փոխվել են գրադարանների բովանդակությունն ու գրադարանավարի գործառույթները և անշուշտ վերափոխվել է վերջիններիս մասնագիտական գիտակցությունը: Խորհրդային տարիներին գրադարաններին

հանձնարարված էր ծառայել իշխանության պահանջների գաղափարախոսությանը: Այլ կերպ ասած՝ կոմունիստական գաղափարախոսություն ներարկել հասարակության մեջ: Այս իրողությունը հանգեցրեց ֆորմալիզմի, կարգախոսական քարոզչության, անիրագրելիության և գրադարանավարի մասնագիտության նկատմամբ անարգանքի: Արդյունքում ձևավորվել էր «կատարող» գրադարանավարի կերպար, որը միայն մեխանիկական գործառույթներ էր իրականացնում, իսկ դոգմատիզմը դարձավ նրանց պրոֆեսիոնալ մտածելակերպի հատկանիշ: Գրադարանավարների աշխատանքում գերակայում էր պասիվությունը, իներցիան, շաբլոնը, գրեթե չկային կամ առհասարակ բացակայում էին նորարարությունն ու ստեղծական մոտեցումը, գերակշռում էր ցածր պրոֆեսիոնալ ինքնագիտակցությունը և սեփական անձի, դերի և մասնագիտության ցածր ինքնագնահատականն ու պատկերացումը:

Բայց վստահորեն կարելի է նշել, որ այսօր գրադարանավարը մասնագիտական գիտակցության վերածնունդ է ապրում: Այս մասնագիտության բազմազանությունն ու ծավալուն բնույթը հնարավորություն են տալիս ձերբագատվել այդ հնացած և արդի պայմաններում անպիտան դարձած պատկերացումներից, և դրանք փոխարինել նոր՝ գիտականորեն հիմնավորված և արդյունավետ պատկերացումներով:

## ***1.2 Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործառույթները***

Այսօր գրադարանավարներից շատերը ակտիվորեն մասնակցում են գրադարանային գործի վերածննդի գործընթացին, բարձրացնում են այս աշխատանքի որակի նկատմամբ պահանջների և պրոֆեսիոնալիզմի մակարդակը: Մեր օրերի պրոֆեսիոնալ գրադարանավարն իր կատարած աշխատանքի նկատմամբ այլև չունի անվստահություն: Նա յուրացնում է ոլորտի փոփոխվող պայմանները, որսում է տեղեկատվության հոսքը և անձամբ մասնակցում է դրանց ստեղծմանը, ակտիվորեն համագործակցում է տեղական կառավարման մարմինների հետ, ուսումնասիրում ընթերցողների նոր պահանջներն ու կարիքները: Գրադարանավարներն այսօր դառնում են սոցիալ-մասնագիտական այն խումբը, ովքեր շատ հարցերում անմիջականորեն ազդում են մշակույթի, կրթության և տեղեկատվական համակարգերի զարգացման վրա:

Գրադարանավարի մասնագիտության կարևորագույն պահանջներից է գրադարանավարի սոցիալական և մասնագիտական դիրքորոշման պարտադիր հստակությունը: Գրադարանավարի դիրքորոշումը աշխարհի, գրադարանային իրականության և գրադարանային գործունեության նկատմամբ գրադարանավարի ինտելեկտուալ և էմոցիոնալ-գնահատող վերաբերմունքի համակարգն է, որը և նրա գործողությունների աղբյուրն է:

Գրադարանավարի դիրքորոշումը սահմանվում է մի կողմից՝ հասարակության կողմից նրան ներկայացվող պահանջներով, ակնկալիքներով ու հնարավորություններով, մյուս կողմից՝ գործում են հենց գրադարանավարի ներքին անձնական հատկանիշներն ու ակտիվության աղբյուրները, մասնավորապես՝ նախասիրությունները, սրտացավությունը, շարժառիթները, նպատակները, գաղափարները, աշխարհայացքը և այլն: Հենց գրադարանավարի դիրքորոշման մեջ են դրսևորվում վերջինիս անձնական սոցիալական կողմնորոշումները, քաղաքացիական վարքագծի ու գործունեության տեսակը: Սոցիալապես ակտիվ գրադարանավար-անձի զարգացման կարևոր ցուցանիշ է նրա մասնագիտական արժեքները, ինչպիսիք են՝ գրադարանավարի գործառույթների սոցիալական դերի գիտակցումը, տվյալ մասնագիտությունն ընտրելու հանրային նշանակություն ունեցող շարժառիթը, արժեքային վերաբերմունքը գրադարանային գործի նկատմամբ, մասնագիտական պարտքն ու պատիվը, հարգանքը սեփական մասնագիտության նկատմամբ, ընթերցողների հետ մանկավարժական շփման ձիրքը, մասնագիտական ինքնակրթության և ինքնազարգացման ցանկությունը:

Գրադարանավարը կապված է հասարակության բոլոր շերտերի հետ՝ երեխա, պատանի, երիտասարդ, ուսանող, գիտնական, քաղաքական գործիք և այլն:

Մենք ապրում ենք արագ փոփոխվող դարաշրջանում: Նոր տեխնոլոգիաները բերում են նոր հարմարություններ և մարտահրավերներ ուսումնական գրադարանների և գրադարանավարների համար:

Արդի գրադարանավարի գործառույթներն օր օրի նոր մոտեցում, աշխատանքի յուրովի կազմակերպում են պահանջում՝ կախված մասնագետի նկատմամբ տվյալ



կառույցի ներկայացրած պահանջներից և կարիքներից, որտեղ աշխատում է սվյալ մասնագետ-գրադարանավարը: Կան պահանջներ, որոնք առանցքային են բոլոր մասնագետների համար.

- SS ոլորտին, համակարգչային տարբեր ծրագրերին տիրապետումը
- էլեկտրոնային մատենավարության՝ էլեկտրոնային բազաներ ստեղծելու և վարելու կարողությունը
- գրադարանի էլեկտրոնային գրացուցակը վարելու հմտությունը
- նախագծային աշխատանքը
- սերտ համագործակցությունը դպրոցի առարկայական ուսուցիչների (եթե գրադարանավարը աշխատում է դպրոցում), այլ մասնագետների հետ
- թվայնացման, պատճենահանման հմտություններին տիրապետումը
- որպես աշխատանքի մշակութային կողմ՝
  - ✓ հասարակության կողմից պահանջված փաստաթղթերը, նոր լույս տեսած աշխատությունները և դրանց ձեռքբերումը և ազատ տրամադրումը ընթերցողին
  - ✓ գրադարանային ոլորտի նորություններին մշտապես տեղեկացված լինելը
- որպես աշխատանքի տեխնիկական կողմն՝
  - ✓ արձանագրել, ցուցակագրել և այբբենական կարգով դասավորել փաստաթղթերը, ընդունել ընթերցողին, օգնել ընտրության մեջ, տեղեկացնել, հետաքրքրություն առաջացնել ցուցահանդեսների և քննարկումների վերաբերյալ
  - ✓ գրքերի, ամսագրերի, տարբեր փաստաթղթերի, DVD-ների, CD-ների, CD-ROMS-երի, ձայներիզների ձեռքբերումն ու պահպանումը
- մարդկանց հետ շփվելու կարողությունը:

Փորձը ցույց է տալիս, որ երբ դասավանդողը և գրադարանավարը համագործակցում են, սովորողների ուսումնառության մակարդակն ավելի բարձր է լինում: Գրադարանավարը դառնում է ուսուցման խորհրդատու, որը իր մասնակցությունն է ունենում ուսուցման բոլոր մակարդակներում: Տեղեկատվական աղբյուրների վերաբերյալ նրանց իմացությունը կարող է օգնել դասավանդողին գտնելու

անհրաժեշտ նյութը, սովորողի մեջ խթանել տարբեր աղբյուրներից օգտվելու և միննույն տեղեկատվության վերաբերյալ մտածելու, վերլուծելու կարողությունը:

## ԳԼՈՒԽ 2

### *Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային գործիքները*

#### *2.1. Անհատական աշխատանքային պլան*

Գրադարանավարի աշխատանքում կարևոր գործիք է նրա անհատական աշխատանքային պլանը: Կախված անձից, հաստատությունից, պայմաններից ու իրավիճակից՝ այն կարող է փոփոխվել, վերաձևակերպվել: Ի՞նչ է այն իրենից ներկայացնում և ի՞նչ բաղկացուցիչներ է իր մեջ ներառում: Անհատական աշխատանքանին պլանը օգնում է գրադարանավարի, առհասարակ ցանկացած մասնագետի, աշխատանքի ճիշտ կազմակերպմանը, շարաթական, ամսական, կիսամյակային աշխատանքների պլանավորմանը: Այն աշխատանքին հաղորդում է կարգավորվածություն, հետևողականություն, աշխատանքային-մասնագիտական նպատակի ու խնդիրների ճիշտ ձևակերպում և իրականացում: Անհատական աշխատանքային պլանի հիմնական բաղկացուցիչներն են՝ աշխատանքային օրերը, ժամերն ու ժամանակահատվածը, աշխատանքի կազմակերպման ձևերը և բովանդակությունը:

Ժամանակակից գրադարանավարի աշխատանքային պլանը խիստ տարբեր է նախկին պատկերացումներից: Այն աշխատողին ընձեռում է լայն հնարավորություններ և իր մեջ ներառում բովանդակային լայն ծավալներ և ճկունություն: Տարբեր հաստատություններ ունեն իրենց առանձնահատկությունները՝ կախված ժամերից, աշխատանքի կազմակերպման ձևից և բովանդակությունից:

***\*Հավելված 1: Գրադարանավարի անհատական աշխատանքայի պլանի նմուշ***

Հաստատությունը՝ Լոռու մարզի Քարինջի միջնակարգ դպրոց

Գրադարանավարի ազգանուն, անունը՝ Մոսիսյան Անահիտ

Ուսումնական տարին՝ 2018-2019 ուստարի

Աշխատանքի կազմակերպման ձևը և բովանդակությունը

- Տարածքի օդափոխում, սեղանների փոշիների մաքրում, գրքերի փոշիների մաքրում:
- Գրադարանում գտնվող ծաղիկների խնամք:
- Դպրոցի աշակերտներին, ուսուցիչներին դասագրքերով և ուսումնաօժանդակ գրականությամբ ապահովում:
- Աշակերտների և ուսուցիչների հետ աշխատանք, դպրոցում կազմակերպվող միջոցառումներին նյութերի տրամադրում:
- Ժամանակացույցի, գրադարանավարի օրացույցի համաձայն նախագծային աշխատանք:
- Ընթերցողական նախագծերին աջակցություն և խթանում:
- Գրադարանի ֆոնդի համալրում. դպրոցի ծնողների, ուսուցիչների, սովորողների, համայնքի բնակիչների շրջանում գրքերի նվիրատվության խթանում, դրան ուղղված այլ միջոցառումների, ակցիաների կազմակերպում
- Դպրոցի գրադարանի ԴՇՀ կառավարման ավտոմատացված համակարգի սպասարկում:
- Աշակերտներին, ուսուցիչներին ուսումնական ձեռնարկներով ապահովում:
- Նոր ստացված գրքերի և դասագրքերի մշակում:
- Գրացուցակի, ֆոնդի վարում:
- [Գրադարանավարի բլոգի սպասարկում:](#)

Աշխատաժամանակի կառուցվածքը

Շաբաթական, կիսամյակային անհատական աշխատաժամանակ.

Աշխատանքայի օրեր	Ժամեր	Աշխատավայրը	Ընդմիջման ժամեր	Աշխատանքի բովանդակությունը
Երկուշաբթի	9.00-15.30	Քարինջի միջնակարգ դպրոց	12.00-12.30	*Աշխատանքի բովանդակությունը բխում է վերը շարադրված կետերից: Յուրաքանչյուր շաբաթվա համար այն կարող է տարբեր լինել:
Երեքշաբթի				
Չորեքշաբթի				
Հինգշաբթի				
Ուրբաթ				

**2.2. Գրադարանավարի օրացույց**

Ժամանակակից գրադարանավարի մյուս կարևոր աշխատանքային գործիքը գրադարանավարի օրացույցն է: Այն կազմվում է տարեկան, ամսական օրացույցներով՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների համաձայն: Որպես հիմք են վերցվում տվյալ հաստատությունից կողմից կարևորված միջոցառումները և պետականորեն հաստատված տոնացույցն ու տաղավար տոների ժամանակացույցը (օրացույցը կազմելիս հատկապես օգտագործվել է ՀՀ Մշակույթի նախարարության Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի «Հիշարժան տարեթվեր 2019» ձեռնարկը և ՀՀ ԿԳՆ «Մխթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայքում՝ <https://www.mskh.am/> հրապարակված 2018-2019 ուստարվա [ուսումնական օրացույցը](#)): Ուսումնական տարվա ընթացքում ուսումնական օրացույցում կարող են փոփոխություններ լինել: Օրացույցում դրվում են տոներ, որոնք կարևորվում են տվյալ հաստատության տնօրենի, գրադարանավարի կողմից: Նախատեսվում է տվյալ ուսումնական տարվա ընթացքում ինչ-որ ձևով անդրադառնալ օրացույցում նշված տոներին, հիշատակի օրերին: Դրանց կցվում են աշխատանքային նախագծեր: Կարող

են անդրադառնալ փառատոնի, միջոցառման, ստուգատեսի, ուսումնական փաթեթների հրապարակման, շնորհավորանքի, ակցիաների միջոցով:

**Հավելված 2: \*Գրադարանավարի օրացույցի նմուշ:**

**Հուլիս**

**1-2-ը հունվարի**՝ Ամանոր

**6-ը հունվարի**՝ Սուրբ Ծնունդ և Հայտնություն

**11-ը հունվարի**՝ Շնորհակալության միջազգային օր

**20-ը հունվարի**՝ Սիլվա Կապուտիկյան-100, հայ բանաստեղծուհի, արձակագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ (1919-2006)

**26-ը հունվարի**՝ Պարույր Սևակ - 95, հայ բանաստեղծ (1924-1971)

**28-ը հունվարի**՝ Հայոց բանակի օր - 27 (1992)

**Փետրվար**

**14-ը փետրվարի**՝ Տեառնընդառաջ

**19-ը փետրվարի**՝ Գրքի նվիրատվության օր, [հրականացված նախագիծ](#)

և Հովհաննես Թումանյան-150, հայ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ (1869-1923)

**21-ը փետրվարի**՝ Մայրենի լեզվի միջազգային օր (1992), [հրականացրած նախագիծ](#)

**Մարտ**

**3-ը մարտի**՝ Գրողի միջազգային օր

Մատենադարան-60 (1959)

**5-ը մարտի**՝ Վազգեն Սարգսյան-60, հայ պետական և ռազմական գործիչ (1959-1999)

**8-ը մարտի**՝ Կանանց միջազգային օր

**14- մարտի**՝ Ալբերտ Էյնշտեյնի ծննդյան 140-ամյակ

**20-ը մարտի**՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային օր

**21-ը մարտի**՝ Պոեզիայի համաշխարհային օր

**27-ը մարտի**՝ Թատրոնի միջազգային օր

## Ապրիլ

**1-ը ապրիլի**՝ Կատակի օր

**2-ը ապրիլի**՝ Մանկական գրքի միջազգային օր

**6-ը ապրիլի**՝ Հայաստանի ժուռնալիստների միություն-60 (1959)

Լևոն Շանթ-150, հայ գրող, մանկավարժ, հասարակական գործիչ (1869-1951)

**7-ը ապրիլի**՝ Մայրության, գեղեցկության և սիրո օր

**12-ը ապրիլի**՝ Վրթանես Փափագյան-155, հայ գրող (1864-1920)

**18-ը ապրիլի**՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր (1983)

**20-ը ապրիլի**՝ Դանիել Վարուժան-135, արևմտահայ բանաստեղծ, հասարակական գործիչ (1884-1915)

**23-ը ապրիլի**՝ Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օր  
Վիլյամ Շեքսպիր-455, անգլիացի գրող, դերասան (1564-1876)

**24-ը ապրիլի**՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օր

**26-ը ապրիլի**՝ Հովհաննես Շիրազ (Օնիկ Կարապետյան)-105, հայ բանաստեղծ (1914(1915)-1984)

## Մայիս

*1-ը մայիսի*՝ Աշխատանքի օր (Համերաշխության միջազգային օր)

*3-ը մայիսի*՝ Մամուլի ազատության համաշխարհային օր

*8-ը մայիսի*՝ Շուշիի ազատագրման օր

*9-ը մայիսի*՝ Հաղթանակի և խաղաղության օր

*15-ը մայիսի*՝ Ընտանիքի օր

*18-ը մայիսի*՝ Թանգարանների միջազգային օր

*20-ը մայիսի*՝ Օնորե դը Բալզակ-220, ֆրանսիացի գրող (1799-1850)

*22-ը մայիսի*՝ Շառլ Ազնավուր (Վաղինակ Ազնավուրյան)-95, ֆրանսահայ երգիչ, քանաստեղծ, դերասան(1924-2018)

*22-28-ը մայիսի*՝ Սարդարապատի ճակատամարտ (1918)

*28-ը մայիսի*՝ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օր (1918)

## Հունիս

*1-ը հունիսի*՝ Երեխաների պաշտպանության միջազգային օր, [հրականացված նախագիծ](#)

*6-ը հունիսի*՝ Ալեքսանդր Պուշկին -220, ռուս գրող (1799-1837)

*15-ը հունիսի*՝ Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշների օր

*25-ը հունիսի*՝ Ակսել Բակունց-120, հայ արձակագիր (1899-1937)

## Հուլիս

**4-ր հուլիսի**՝ Հայաստանի ազգային գրադարանի օր

**5-ր հուլիսի**՝ Սահմանադրության օր

**14-ր հուլիսի**՝ Ժիրայր Անանյան-85, հայ գրող (1934-2004)

**18-ր հուլիսի**՝ Վահան Թոթովենց-125, հայ գրող(1894-1938)

**21-ր հուլիսի**՝ Էռնեստ Հեմինգուեյ-120, ամերիկացի գրող (1899-1961)

**28-ր հուլիսի**՝ Ալեքսանդր Դյումա (Դյումա-որդի)-195, ֆրանսիացի գրող (1824-1895)

## Օգոստոս

**1-ր օգոստոսի**՝ Հայաստանի գրողների միության առաջին համագումար-85, (1934)

**9-ր օգոստոսի**՝ Համերաշխության միջազգային օր

**10-ր օգոստոսի**՝ Մկրտիչ Խերանյան -120, հայ գրող (1899-1970)

**11-ր օգոստոսի**՝ Հայկական տոմարով հնագույն Ամանորի սկիզբն է, Նավասարդի 1-ը Արեգ օրը

**12-ր օգոստոսի**՝ Երիտասարդների միջազգային օր

**28-ր օգոստոսի**՝ Յոհան Վոլֆգանգ Գյոթե-270, գերմանացի գրող (1749-1832)

## Սեպտեմբեր

**1-ր սեպտեմբերի**՝ Գիտելիքի, գրքի և դպրության օր ([նախագիծն այստեղ](#))

**8-ր սեպտեմբերի**՝ Գրագիտության միջազգային օր

Լրագրողների միջազգային օր

**15-ր սեպտեմբերի**՝ Հրանտ Դինք-65, պոլսահայ լրագրող, հրատարակիչ, Թուրքիայում «Ակոս» թերթի հիմնադիր, գլխավոր խմբագիր (1954-2007)



Ստեփան Զորյան -130, հայ գրող (1889-1967)

**18-ը սեպտեմբերի՝** Մուսա լեռան հերոսական պաշտպանության օր (1915)

**19-ը սեպտեմբերի՝** Խաղաղության միջազգային օր (նշվում է ամեն տարի սեպտեմբերի երրորդ երեքշաբթի օրը)

Երվանդ Օտյան -150, հայ գրող, երգիծաբան (1869-1926)

**21-ը սեպտեմբերի՝** Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց անկախ պետություն (1991) Անկախության օր

**27-ը սեպտեմբերի՝** Խաչատուր Աբովյանը և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը բարձրացան Արարատի գագաթը-190 (1829)

**30-ը սեպտեմբերի՝** Գևորգ Էմին -100, հայ գրող (1919-1998)

## Հոկտեմբեր

**1-ը հոկտեմբերի՝** Երաժշտության օր

Շահեն Թաթևյան -95, հայ գրող (1924-1992)

**5-ը հոկտեմբերի՝** Ուսուցչի օր

**6-ը հոկտեմբերի՝** Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի օր

7-ը հոկտեմբերի՝ Գրադարանավարի օր

**8-ը հոկտեմբերի՝** Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան)-150, հայ կոմպոզիտոր, երաժշտագետ, երգիչ, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր (1869-1935)

**12-ը հոկտեմբերի՝** Թարգմանչաց տոն

**15-ը հոկտեմբերի՝** Խաչատուր Աբովյան -210, հայ գրող, մանկավարժ, լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր (1809-1848)

Միխայիլ Լերմոնտով-205, ռուս բանաստեղծ (1814-1841)

*16-ը հոկտեմբերի՝* Մամուլի աշխատողի օր

*22-ը հոկտեմբերի՝* Սպիտակի քաղաքային գրադարան-80, Լոռու մարզ (1939)

*24-ը հոկտեմբերի՝* Սոս Սարգսյան-90, հայ դերասան (1929-2013)

*31-ը հոկտեմբերի՝* Դպրոցական գրադարանների միջազգային օր (տոնվում է հոկտեմբերի վերջին շաբաթվա երկուշաբթի օրը, և հոկտեմբերը համարվում է դպրոցական գրադարանների միջազգային ամիս)

## Նոյեմբեր

*4-ը նոյեմբերի՝* Ստեղծվեց ՄԱԿ-ի կրթության և մշակույթի հարցերի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ 1946)

*6-ը նոյեմբերի՝* Ուրախների և հնարամիտների ակումբի միջազգային օր

*10-ը նոյեմբերի՝* Երիտասարդության համաշխարհային օր

*14-ը նոյեմբերի՝* Միքայել Նալբանդյան –190, հայ գրող, հրապարակախոս, փիլիսոփա, գրաքննադատ (1829 – 1866)

*17-ը նոյեմբերի՝* Ուսանողների միջազգային օր

29-ը նոյեմբերի՝ Երվանդ Թաղիանոսյան-155, գրադարանային հայ գործիչ, թարգմանիչ, հասարակական գործիչ (1864 -1948)

## Դեկտեմբեր

*7-ը դեկտեմբերի՝* Երկրաշարժի զոհերի հիշատակի օր

*31-ը դեկտեմբերի՝* Ամանորի տոնական օր

### *2.3. Գրադարանավարի մեղիատիրությունները. թվային գրադարան, գրադարանավարի բլոգ*

Համակարգիչների մուտքը գիտական աշխարհում ու մեր բոլորի կյանքում հեղաշրջում կատարեց տեղեկատվության պահոցներում՝ առաջադրելով գրադարանների, արխիվների, թանգարանների աշխատանքի նորովի կազմակերպում: ԱՄՆ-ը, որը համարվում է թվային գրադարանի ստեղծողը, հսկայական փորձ է կուտակել այդ բնագավառում: Թվային գրադարանը համապատասխան ծառայություններ ունեցող այնպիսի սվյալների կառավարելի հավաքածու է, որոնք պահվում են թվային ձևաչափով և մատչելի են համակարգչային ցանցերի միջոցով: Թվային գրադարանը ունի մի շարք առավելություններ ավանդական գրադարանի համեմատությամբ.

- ✓ ավանդական գրադարանից օգտվելու դեպքում ընթերցողը իրեն անհրաժեշտ նյութը գտնելու համար պետք է այցելի գրադարան՝ կտրվելով իր աշխատանքից, իսկ թվային գրադարանից օգտվելու դեպքում պետք է միայն համակարգչի միջոցով միանա համացանցին և ստանա իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը
- ✓ թվային գրադարանը իր որոնման լայն համակարգերի, տեղեկատվության, ռեսուրսների մատչելի լինելու, հեշտ յուրացման, օրվա բոլոր ժամերին հասանելի լինելու պատճառով ունի անվիճելի առավելություն ավանդական գրադարանի նկատմամբ
- ✓ թվային գրադարանում հնարավոր է միաժամանակ օգտվել մեծ ծավալի տեքստից, տեսալսողական նյութերից, մասնակցել առցանց սեմինարների. գիտաժողովների, քննարկումների
- ✓ տեղեկատվության արդիականության ապահովում, քանի որ աշխարհի շատ գրադարաններ ձեռք են բերում հանրագիտարանների, բառարանների տեղեկատու հրատարակությունների թվային տարբերակները
- ✓ հնարավոր է դարձնում տարածքների խնայողական օգտագործումը. խոշոր, ավանդական գրադարանները նյութական մեծ ներդրումներ պահանջող կառույցներ են, իսկ թվային գրադարանները թույլ են տալիս պահպանել թվային գրքերի հարյուրավոր հատորներ:

Գրադարանավարը ստանձնում է նոր գործառույթների կատարում. թվային գրադարանի համակարգում նա դրսևորվում է որպես`

- ✓ տեղեկատվության բնագավառի փորձագետ, որը տիրապետում է տվյալների որոնման համակարգին, գիտելիքների կառավարմանը, տեղեկատվության նախագծման ու մատուցման գործընթացներին
- ✓ տիրապետում է տարբեր ծրագրերի:

Երևույթներն այսկերպ վերլուծելով` հասկանալի է դառնում, թե մեդիադաշտն ինչու է օրեցօր համալրվում նորանոր էլեկտրոնային գրադարաններով:

«Մխիթար Մեքաստացի» կրթահամալիրի [«Տիգրան Հայրապետյան» մեդիագրադարանը \(lib.mskh.am\)](#) այսօր մեր մեդիադաշտում եղած գրադարաններից մեկն է, որի ռեսուրսը համալրելու գործին մասնակից են թե՛ սովորողները և թե՛ դասավանդողները: Մեդիագրադարանը կրթահամալիրի հեղինակային կրթության ծագում կարևոր բաղկացուցիչ է: Դասավանդողն ու սովորողը ոչ միայն մեդիագրադարանի ստեղծողներն են իրենց աշխատանքով, այլև իրացնողն ու ամենօրյա օգտագործողը: Մեդիագրադարանի ստեղծելիս շտկվում են նաև այդ սխալներն ու վրիպակները: Համացանցում հանիպում են սխալներ, որոնք գուցե թե չիմացության արդյունք են: Այսպես` Ակսել Բակունցի «Բրուտի տղան» պատմվածքում «**դորակ**»-ների փոխարեն տպված են դարակներ, այնինչ **դորակը** ջրի փոքրիկ անոթն է, կուլան: Կամ «**օղտն ոչ անցնի ասդի ծակովն**» արտահայտության մեջ **օղտը** (ուղտ) գրված է օխտը, որն արդեն ուրիշ բացատրություն ունի (յոթ, կամ ուխտ): [Տես՝ «Դպիր» էլ. ամսագիր:](#)

Ինչպես նշվեց, մեդիագրադարանի աշխատանքներին մասնակցում են նաև սովորողներ. այդպիսի աշխատանքներ են` համակարգչային հատուկ ծրագրերով թվայնացումը, սքանավորումը, ինչպես նաև մուտքագրման աշխատանքները:

*Հավելված 3\* (այստեղ հավաքված են առավել օգտագործվող հայալեզու էլեկտրոնային գրադարաններ)*  
Էլեկտրոնային գրադարանների ցուցակ.

- ✓ [«Տիգրան Հայրապետյան» մեդիագրադարանը \(lib.mskh.am\)](#)
- ✓ [Գրապահարան](#)
- ✓ [ABCD](#)
- ✓ [Փոքրիկ am](#)
- ✓ [Դպրոցական դասագրքերի գրադարան](#)
- ✓ [Հայաստանի ազգային ագրարային համալսարան](#)
- ✓ [Գրանիշ](#)
- ✓ [Գրքասեր](#)
- ✓ [Հայ մտենագիտության թուանշանային գրադարան](#)

#### Հրատարակչություններ

- ✓ [Էդիթ Պրինտ](#)
- ✓ [Զանգակ](#)
- ✓ [Անտարես](#)
- ✓ [Հայաստան \(Ֆեյսբուքյան էջ\)](#)
- ✓ [Շաղիկ](#)

Արդի գարդարանավարի աշխատանքային գործիքների կազմում կարևոր տեղ է զբաղեցնում նաև **գրադարանավարի մասնագիտական բլոգը**: Սա այն մեդիատիրույթն է, որտեղ գրադարանավարը ազատորեն կարող է հրատարակել նախագծեր, արդյունքներ, տեղեկատվական նյութեր, էլեկտրոնային փաթեթներ:

Բլոգը հնարավորություն է ստեղծում առանձնացնելու բաժիններ, ինչն էլ օգնում է աշխատանքի համակարգմանը և նպաստում աշխատողի ստեղծականության զարգացմանը:

**Հավելված 4\*** [Իմ բլոգը՝ գրադարանավար՝ Անահիտ Մուսինյան](#)

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ գրադարանավարի գործառույթները հազարամյակների ընթացքում կրել են բազում փոփոխություններ: Գրադարանավարն անընդհատ կատարելագործվում է: Նա ձեռք է բերել այնպիսի որակներ, ինչպիսիք ունեն հոգեբանը, մանկավարժը և սոցիոլոգը, ՏՏ ոլորտի մասնագետը, բլոգերը: Գրադարանավարը իր ձեռքի տակ ունի աշխատանքային հզոր գործիքները, որը պետք է կիրառի իր ամենօրյա աշխատանքում:

Արդի գրադարանավարի կարևոր գործառույթներն են.

- ✓ մասնակցել գրադարանային վերածննդի գործընթացներին
- ✓ գրադարանի գործունեությունը ընթերցողի նպատակների ու արդյունքների հետ փոխկապակցել
- ✓ տեսականն ու նոր գողափարները գործնական ու ստեղծագործ փնտրտույթներում կիրառելու նոր չափանիշներ, մոտեցումներ, գործողություններ փնտրել և գտնել:

Կրթվելու ընթացքում է, որ սովորողները հաղորդակցվում են գրականությանը, գրադարանի և գրադարանավարի հետ, ձեռք են բերում ընթերցողական և գեղարվեստական ճաշակ, զարգացնում բանավոր և գրավոր խոսքը, ցուցաբերում են կուտակած գիտելիքները դրսևորելու կարողություններ: Սովորող-գրադարան կապող օղակը գրադարանավարն է: Իրականում գրադարանավարից շատ մեծ բան է կախված, այն է՝ թե ինչ հաճախականությամբ սովորողները կայցելեն գրադարան, կօգտվեն տեղի գրքերից, կիրականացնեն գրքի քննարկումներ, ինչու ոչ՝ նաև բանավեճեր:

Դպրոցական գրադարանները օժտված են մի շարք գործառույթներով՝ տեղեկատվական-հաղորդակցական, կրթադաստիարակչական, սպասարկման, մանկավարժական:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ են

- ✓ դպրոցական կրթական համակարգում գրադարանի, ընթերցողների և գրքային ռեսուրսների միջև հարաբերության որոշումը

- ✓ ուսումնական ծրագրերից բխող դպրոցի ուսուցչական կազմի և աշակերտների ընթերցողական պահանջների ուսումնասիրությունը և հետազոտության արդյունքների արդյունավետ կիրառումը
- ✓ այսպիսի գործունեության ծավալումը կարող է հստակություն մտցնել ոչ միայն տեղեկատվական աղբյուրների ձեռքբերման, այլև գրադարանները նախևառաջ գրադարանավար-մատենագետ մասնագետներով համալրելու, գիրք-գրադարան-ընթերցող կապերը ակտիվացնելու և կրթական գործը արդյունավետ դարձնելու հարցերում
- ✓ որպեսզի դպրոցում ստեղծվի տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայր, անհրաժեշտ են գրադարանային ֆոնդերի շարունակական համալրում, գրքերի տեսության և թեմատիկ այլ միջոցառումների կազմակերպում, գրադարանային-մատենագիտական լայն սպասարկում՝ անկախ դասական և տեխնոլոգիական մեթոդների կիրառումից

Ակնհայտ է, որ ժամանակակից գրադարանային գործում կարևոր տեղ է հատկացվում տեխնոլոգիական միջոցներին՝ համակարգիչ, համացանց, տեսագրող և ձայնագրող այլ գործիքներ, պրոյեկտոր, մեդիատիրույթներ:

Սակայն չպետք է մոռանալ, որ կրթական և հասարակական կյանքի զարգացման մեջ լայնածավալ տեղ ունի նաև հումանիտար զարգացումը՝ **հասարակության հումանիտարացումը:**

Ելնելով ժամանակի պահանջից՝ հարկավոր է լուծել տեղեկատվական տեխնոլոգիաներից կախում ունեցած անհատի հումանիտարացման խնդիրը, որովհետև առանց գրքի ճանաչողական դերի բարձրացման և հումանիտար գիտելիքների խորացման՝ անիմաստ է խոսել կրթադաստիարակչական ընդհանուր գործի և անձի ինտելեկտուալ զարգացման մասին:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ\*

## *Տպագիր աղբյուրներ*

1. Գագիկ Սուքիասյան, «Գրադարանը և գրադարանավար մասնագետը դպրոցական կրթության համակարգում», Երևան 2016
2. ՀՀ Մշակույթի նախարարության Խնկո Ապոբ ազգային մանկական գրադարան, «Հայտնի և անհայտ գրադարանավարներ, անվանի գարդարաններ», Երևան 2012, կազմող՝ Գայանե Կարապետյան, խմբագիր՝ Ներսես Հայրապետյան
3. ՀՀ Մշակույթի նախարարության Խնկո Ապոբ ազգային մանկական գրադարան, «Հիշարժան տարեթվեր 2019», Երևան 2018, Կազմողներ՝ Գոհար Մկրտչյան, Արաքսյա Դավթյան

## *Էլեկտրոնային աղբյուրներ*

4. «Մխիթար Սեբաստացի», կրթահամալիր, [«Դպիր»](#) մանկավարժական հանդես, Թամար Ղահրամանյան, [«Մեդիագրադարանի համայրումը՝ սովորողի հետազոտական նախագիծ»](#)
5. 2017 թվական, Մարի Գաբանյան և ընկերներ [Ուղեցույց ժամանակակից գրադարանավարների համար](#)
6. ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պաշտոնական կայք՝ <https://www.mskh.am/>
7. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի [«Գրադարանավարի բլոգ»](#)

*\*Ցանկում ներկայացված են գրականության և տպագիր էլեկտրոնային աղբյուրները, որոնցից ազդեցություն է կրել աշխատանքը:*